

## ՀՈՂԻ ՎԻՇՏԸ

### Մ ՈՒՐ ԱՅԱՆԻ ԵՐԿԵՐ ՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### I.

Հայոց նոր գրականութեան այն փոքրիկ ածուն, որ պէտք է լինի մեր քննութեան առարկան, ռուսահայ աշակուսիկ վիպասանի, շնորհալի իւմորիստի—Մուրացանի երեք երկերն են. «Խորհրդաւոր միանձնուհին», «Նոյի ագռաւը» ու «Առաքեալը», որոնք թէև հեղինակի գեղարուեստական ստեղծագործութեան մի փոքրիկ մասն են կազմում, բայց և այնպէս գրականութեան զարգացումը ուսումնասիրողի համար յատուկ նշանակութիւն ունեն։ Մուրացանի երկերի միջից այս երեքն առանձնացնելը քմահաճոյքի արդիւնք չէ, այլ հիմնուած է նրանց ներքին կապի վերայ. այս երեք երկը միասին կազմում են մի ամբողջութիւն, որ նուիրուած է հասարակական նշանաւոր հարցերից մէկին—հայ գիւղի դրութեանը։

1904 թուականին իւր գրուածքների հրատարակութիւնն սկսելիս՝ Մուրացանը «Երկասիրութիւնների» առաջին հատորում ընթերցողին ուղղած երկտողի մէջ գրում է.

«Նիւթերը փոխանակ ժամանակագրական կարգով դասաւորելու, ինչպէս առհասարակ ընդունուած է անել, բարւոք դատեցի համադրել ներքին բովանդակութեան համաձայն, որպէս զի կարելի լինէր միևնոյն հատորի մէջ միաժամանակ ամփոփել այնպիսի երկեր, որոնք իրար հետ ունին որոշ կապ, կամ որոնք միասին առած կազմում են մի ամբողջութիւն» Այս իսկ պատճառով ներկայ հատորը . . . ամփոփում է իւր մէջ ա. «Նոյի ագռաւը», բ. «Առաքեալը» և գ. «Խորհրդաւոր միանձնուհին», որոնք թէպէտ լոյս են տեսել զանազան ժամանակներում և ունին

տարբեր նիւթեր, բայց, ըստ գաղափարի էութեան, կազմում են մի ամբողջութիւն։

Գեղարուեստական այս ամբողջութիւնն արդիւնք է XIX դարի երկրորդ յիսնամեակի կովկասահայ հասարակութեան տնտեսական—սոցեալական կացութեան. վերջինս աւելի լաւ հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի խօսք ասել նոյն դարի առաջին յիսնամեակի մասին։

XIX դարի առաջին յիսնամեակում գիւղացիութիւնն ընդհանրապէս տնտեսական բարձր դրութեան մէջ է գտնւում. գիւղերում դեռ ևս իշխում է գլխաւորապէս բնական, փակ, տնային տնտեսութիւնը. փողի ձգտումը հասարակական այս խմբի մէջ տնտեսական գործունէութեան նպատակ չէ. հողի սակաւութիւն նոյնպէս չէ զգացւում։ Գիւղացիները թէև հարստութիւնով միմեանց հաւասար չեն, բայց գիւղում սոցիալական շերտաւորումներ դեռ ևս չկան։ Կարգերն ու բարքերը լիովին նահապետական են։

Խաչատուր Աբովեանը «Վէրք Հայաստանի» վէպի մէջ՝ հիացած այսպէս է նկարագրւում այն ժամանակուայ գիւղացու տունն ու նահապետական նիստ ու կացը։

«Տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը տրարում էին ու Աստուծոյ հոգի կար մէջըներում։ . . . Գինին կտրասներով շարած . . . մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում ու մանողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր։ Նրա հարսն ու փեսէն կամ մէկ աղիղ զոնաղը, որ գլուխը բարձին չէր դնում էս անմահական բարութեան մէջը, էնպէս իմանում էր, թէ գրախտումն ա աչքը իփում կամ բաց անում։ Որը երկու, որը երեք բաղ ունէր, նոքար, հօտաղ դռանը հազիր, ու տան ներոն ու պուճախը գրքմբում էր։ Կտրասներով կողակ, կճճներով պանիր ու դաւուրմա, աքաշներով զօխ, բոխ, ողորմակոթ, բղբղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր,—ծճվ, ինչ տուն, Տասը զոնաղ որ էն սհաթը նրա դռանը վէր կային, սաղամիս ուտէին, խմէին . . . նրա տան խէրն ու բարաքեա-

Թը հն կար, հն կար, . . . Մէկ փարի բան բաղարիցը տուն չէր գալ, էն էլ կտաւ, շապկացու, շուխացու, շատը հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում: Նրանց կնանկները որ մտիկ տայիր, խելքդ կերթար, խառ ու զոււմաշի միջում կորած էին: . . . Մէկը մէկի ջգրու շատ անգամ իրանց օղլուշաղին էնպէս էին ծաղկում, զարգարում, ինչպէս գարնան վարդը, . . . Շատը չորս հինգ հարսն ունէր տանը, որ մէկ տեղը ցաւելիս ուզում էին գլխովը պտիտ դան ու սաները կում անեն, խմեն: Մէկ բան ուզելիս ստի տեղ գլխի վրայ էին գնում, որ նրա տաճն անեն, ու ձեռքները դռներին դրած աչքը կթած ունէին, որ տեսնեն, թէ իրանց տէրը կամ զոնաղը ինչ կհրամայի, որ կատարեն: Կեսուրը կամ կեսառը մէկ աչքը քցելիս ուզում էին տեղն ու տեղը հաղին, էնքան հնազանդ էին: <sup>1)</sup>

Արտիկանի տաճը հաստատում է Ղազարոս Աղայեանը «Բաժանութիւն» կոչուած պատմութեան մէջ, որը մինչև այժմ ուշագրութեան չէ արժանացել, չնայած որ պարունակում է գրականութեան պատմագրի համար մեծ արժէք ունեցող փաստեր:

«Պէտք է ասել,—գրում է Արտիկան և Մանուէլի» հեղինակը,—որ Սմբատի մանկութեան ժամանակ նրանց գիւղաքաղաքում նահապետական սէր և բարեկամութիւն կար: Չարութիւն եթէ կար, գիտակցական չէր, այլ մանկական: Մեծ մարդիկը այնքան միամիտ էին, որ երբեմն մանկական շարութիւն էին անում: Մարդիկ չէին տարբերում ոչ մի բանով, ամենքն էլ գաղափարակից էին միմեանց, մէկ հաւատ ունէին, մէկ յոյս ու մէկ սէր: Չկար անհատական ազատութիւն, բայց նրա գոյութիւնն զգալի չէր ոչ ոքի: Կանայք նոր ձևի հագուստ հագնելը իրանց համար անպատշաճութիւն էին համարում, մեծերի մօտ շխտական մնալը՝ փառք ու պարծանք: Մարդ անխղ-

<sup>1)</sup> Խաչատուր Արտիկան, «Վերջ շայաստանի», Թիֆլիս, 1908, Հրատ. Բագուայ Հայ. Կուլտ. Միութիւն, եր. 34-36:

ճութիւն էր համարում զրկել նրանց իրանց այդ միակ միութարութիւնից: Արտաքուստ սարկութիւն երեցոյ վիճակն սարկութիւն չէր, այլ մի նահապետական սրբացած ու ընտելմունք դառած սովորութիւն, և գտնւում էր ոչ բռնութեան, այլ հայրական սիրոյ հովանաւորութեան տակ: Մեծերի առջև փոքրերի՝ ձեռք սրտին դրած կանգնելը, ձայն ծաղտուն չհանելը, կուրօրէն հնազանդիլը մի թշուառութիւն չէր նրանց համար, այլ մեծ բախտաւորութիւն: Ազատ էին ջրերն ու անտառները, ազատ էին սարերն ու ծորերը, սակաւ էին մարդիկ և շատ էր տեղը. և մարդիկ ապրում էին ինչպէս Արրահամի օրերում: Աղքատ էին մարդիկ քաղաքակրթական սպարազաններով, բայց դո՛հ էին իրանց վիճակից, ոչ մի բանի պակասութիւն չէին դժուո՛ւմ, և ո՛վ է դժացել իր չտեսած բանի պակասութիւնը, որ նրանք զգային: <sup>1)</sup>

Փողային անտեսութիւնը թաղաւորում էր միայն քաղաքներում, որտեղ՝ դրամագլուխն ամբողջովին գործադրւում էր առևտրական ու արհեստաւորական ձեռնարկութիւնների վերայ, վաճառական դասը դեռ ևս այնքան զօրեղ չէր, չկար արդիւնաբերական գործունէութիւն, չկային գործարաններ:

Քաղաքը դեռ չէր յաղթահարել դիւղին:

Եթէ ըստ Ղազարոս Աղայեանի՝ նահապետական կարգերն ու լիութիւնը թաղաւորում էին զիւղիսքաղաքում, ապա հասկանալի է, թէ այս դրութիւնն ո՛րքան իշխող կլինէր անարատ զիւղում:

(շարունակելի)

Թաղեոս Աղապրէգեան.



1) Ղազարոս Աղայեան «Բաժանութիւն»: Տեսէք «Հայ գրողներ» Ա. գիրք, կազմեցին Ղ. Աղայեան, Ա. Ահարոնեան, Յովհ. Թումանեան և Վ. Փափաղեան. Թիֆլիս, 1909, եր. 54-55: Բոլոր հատուածներն մէջ ընդգծումները մերն են.